

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ
ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ ԼԵՎՈՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ՀԵՏ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– *Ինչպե՞ս ստացվեց, որ փոխեցիր մասնագիտությունդ՝ ֆիզիկոսից՝ ազգագրագետի:*

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.– *Դեռ դպրոցական տարիներին ինձ մոտ ձևավորվել էին հետաքրքրությունների երեք ուղղություն, որոնցից յուրաքանչյուրը կարող էր դառնալ ապագայում իմ հիմնական մասնագիտությունը: Ես սովորել եմ մաթեմատիկական թեքումով դասարանում և դա այն տարիներին էր, երբ ֆիզիկական վերելք էր ապրում, և պարուրված էր ռոմանտիզմի մի շղարշով: Իմ բոլոր հասակակիցներն այն ժամանակ տարված էին Դանիել Դանինի «Տարօրինակ աշխարհի անխուսափելիությունը» գրքով, որը տեսական ֆիզիկայի մասին էր և չափազանց հանրահայտ էր Խորհրդային Միությունում: Ու հասկանալի է, որ և՛ ես, և՛ իմ դասարանցիների մեծ մասը գնացին այդ ուղղությամբ: Մակայն արդեն այդ տարիներին ինձ մոտ, բացի այդ, կար հետաքրքրություն դեպի արխաիկ մշակույթները: Եվ պատահական չէ, որ, սովորելով համալսարանի ֆիզիկայի բաժնում, ես մասնակցեցի ուսխորհրդի գիտաժողովներից մեկին՝ ներկայացնելով մշակույթի սկզբին նվիրված մի զեկուցում: Դա Ֆրոյդի «Տոտեմի և տաբուի» վերանայումն էր և հետագայում՝ արդեն ազգագրության ասպիրանտ լինելով, դրա ոչ շատ ձևափոխած տարբերակը տպագրեցի Մոսկվայում: Իմ առաջին գրքում այն դարձավ առանձին գլուխ, որը գրաքննիչները հանեցին, բայց որի նորացված տարբերակը 2015 թ. տպագրեցի Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին նվիրված ժողովածուում: Նաև կար հետաքրքրություններիս երրորդ ուղղությունը, որը մրցում էր մյուս երկուսի հետ՝ նկարչությունը, և ես մտածում էի, որ կարող եմ նաև այդ ուղղությամբ շարունակել: Այսինքն, այնպես չէր, որ մի բան անում էի, ու հետո միանգամից փոխեցի հետաքրքրություններիս դաշտը: Այս երեք ուղղություններից, միայն, կարծես, ֆիզիկան էր, որ տարիներ հետո իր շարունակությունը չունեցավ, այսինքն, երբ մտա ազգագրության դաշտ որպես ասպիրանտ, ֆիզիկայի հետ իմ մասնագիտական առնչություններս ընդհատվե-*



ցին: Մինչդեռ նկարչության պարագայում դրանք շարունակվեցին, և ես մինչ օրս էլ մասնակցում եմ երգիծանկարիչների թե՛ հայաստանյան, թե՛ միջազգային ցուցահանդեսներին, փառատոներին և ունեմ մրցանակներ: Դրանցից վերջինը՝ արծաթե մեդալ, ստացել եմ 2014-ին Հայաստանում անցկացված երգիծանկարիչների միջազգային փառատոնին՝ «Նոյի վերադարձը» խորագրով: Առաջին տեղը գրաված մրցանակներից էր դեռ խորհրդային տարիներին Կարելիայում ստացածը, այդ աշխատանքներս առասպելաբանության մասին էին: Այսինքն, իմ գիտական հետաքրքրությունը նաև արտացոլվում էր իմ մյուս հետաքրքրություններում: Փորձում էի բացահայտել, թե ինչպես է բարձրացվում՝ առասպելաբանացվում առօրյան և ինչպես են իջեցվում բարձր առասպելները: Իմ այս հետաքրքրությանս նվիրված հոդվածներից մեկի հեղինակ Յուրի Հակոբյանն այն անվանել էր «Լևոն Աբրահամյանի կոմիկական մարդաբանությունը»: Երևի պատահական չէ, որ 2006 թ. ԱՄՆ-ում հրատարակած «Հայ ինքնությունը փոփոխվող աշխարհում» գիրքս նկարագարված է իմ երգիծանկարներով: Մի խոսքով, հետաքրքրություններս ժամանակի ընթացքում հասունացան այնքան, որ ես հասկացա, թե որ մեկն է ինձ համար ավելի կարևոր, և իմ ատենախոսությունը, որը շարադրել եմ Մոսկվայում, Միկլուխո-Մակլայի անվան ԽՍՀՄ ԳԱ ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում ուսանելու տարիներին, նվիրված էր արխաիկ տոնին և առասպելաբանությանը:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.— Ինչպե՞ս ստացվեց, որ հենց այդ թեման ընտրեցիր:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Ինձ հետաքրքրում էր ամենավաղ տոներ, այսինքն՝ տոնի սկիզբը, դրա համար ուզում էի ուսումնասիրել արխաիկ ժողովուրդների տոնական և ծիսական մշակույթը: Ամենամեծ ազդեցությունն այս հարցում իմ վրա ունեցել է Միխայիլ Բախտինը, ում մոտեցումը շարունակել եմ առաջին գրքում, որը հրատարակվեց Հայաստանում 1983 թ.՝ «Первобытный праздник и мифология» վերնագրով, որտեղ ես փորձել եմ վերականգնել նախատոներ՝ Ur-festival-ը: Եվ իմ թեկնածուական ատենախոսությունը նվիրված էր արխաիկ ժողովուրդների մշակույթին՝ Ավստրալիայի և Օվկիանիայի ժողովուրդներին:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.— Մոսկվայում սովորելու տարիներին կա՞ր այնպիսի միջավայր, կայի՞ն մասնագետներ, ովքեր ազդեցություն ունեցան քեզ վրա:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.— Կարող եմ ասել, որ՝ այո, և դա է պատճառը, որ գրքումս Միխայիլ Բախտինի միջնադարյան կառնավալի ուսումնասիրության մոտեցումները տարածեցի նախնադարյան տոնի վրա, և դա ինձ թույլ տվեց դուրս բերել արխաիկ, ենթադրյալ նախատոներ: Չնայած իմ դեկավարը եղել է Ազգագրության ինստիտուտի նախնադարյան հասարակության պատմության բաժնից Աբրահամ Իսահակի Պերշիցը, ում շնորհակալ եմ իր աջակցության համար, բայց իսկական դպրոց ինձ համար եղել է Մոսկվայի սեմիոտիկ դպրոցը, որը

Տարտուի դպրոցի շարունակությունն էր, բայց շատ ավելի խորը ու արդյունավետ: Եվ իմ իսկական ուսուցիչն էր Վլադիմիր Տոպորովը:

Ն. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– Դեռ ասպիրանտական տարիներին քո ամենահայտնի աշխատանքներից դարձավ «Беседа у дерева»-ն՝ տարօրինակ իր ոճով և բովանդակությամբ մի աշխատանք, որը հետագայում հրատարակվեց որպես գիրք: Ե՞րբ և ինչպե՞ս ծնվեց այդ անսովոր գիրքը գրելու գաղափարը:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.– Մինչև գիրք դառնալը այդ տեքստը գրվում էր որպես մի աշխատանք, որտեղ ավարտ չէր նախատեսվում: Այն սկսվել էր դեռ ուսանողական տարիներին, երբ ես ավարտեցի համալսարանը և աշխատում էի որպես ֆիզիկոս, ինչը մեկ անգամ ևս ցույց է տալիս, որ ազգագրագետի մասնագիտության իմ ընտրությունը եղել է ոչ թե միանգամից և պատահական, այլ գուցա հետ է զարգացել: Այդ շրջանում նաև աշխատում էի այն տեքստի վրա, որը հետագայում դարձավ «Զրույցներ ծառի մոտ» գիրքը: Տեքստը՝ զրույցներ են: Գրքից պարզ չէ, թե ով ում հետ է զրուցում, բայց մտքումս ունեի իմ իրական զրուցակիցն ու զրույցները: Հիմքում ուսանող տարիների իմ երկարատև զրույցներն էին բանասեր Վարդան Հայրապետյանի հետ: Հենց նա էլ մղեց ինձ, որ ես դրանք գրքի տեսքով հրատարակեմ: Դա ձևակերպվեց որպես զրույցներ աշակերտի և ուսուցչի միջև ու պարզ չէ, թե նրանցից ով է ուսուցիչը, ով՝ աշակերտը, նրանք տեղերով միշտ փոխվում են: Զրույցները տեղի են ունենում ծառի մոտ, որը հիշեցնում է տիեզերական ծառը: Երբ գիրքը 2005 թ. հրատարակվեց Մոսկվայում «Языки славянской культуры» հեղինակավոր հրատարակչությունում, անոտացիայում գրված էր, որ այնքան էլ պարզ չէ, թե աշխատանքը որ ժանրին է պատկանում: Մոսկվայում առիթ էմ ունեցել այն տարբեր լսարաններում ներկայացնելու: Ձեռագիրը բավականին հանրաճանաչ էր ինտելեկտուալների շրջանում: Գիրքը տպագրվել է, ինչպես ասացի, 2005-ին, բայց արդեն 1970-ականների վերջերից ձեռագիրը ձեռքից ձեռք էր անցնում, արտատպում էին, ձեռագիր եղանակով բազմացնում՝ սամիզդատի տրամաբանությամբ տարածվում էր: Մեր դասախոսներից Սերգեյ Հարությունովն այն ուղարկել էր նույնիսկ Կիրգիզիա՝ գրքի աշխարհագրությունն էլ էր շատ սփռված: Այդ տեքստն անվանում էին փիլիսոփայական մարդաբանություն, բայց ամենարդյունելի և, երևի թե, ամենադիպուկ ձևակերպումն է՝ պոետիկ մարդաբանություն: Ընդ որում, այն պոետիկ է ոչ թե որ պոետիկ լեզվով է շարադրված կամ չափածո է, այլ իր կառուցվածքով է պոետիկ հիշեցնում, իր պոետիկայով է նման: Ինձ համար ամենագնահատելի գովասանքն էր հայտնի նշանագետ Տատյանա Ցիվյանի մի առիթով գրածը «Զրույցների» մասին. որ Հին Հունաստանում կային փիլիսոփաներ, որոնք իրենց ստոիկներ էին անվանում՝ նրանք կանգնած էին զրուցում, կային պերիպատետիկներ, ովքեր քայլելով էին զրուցում, իսկ ես էլ

ծառի մոտ նստած եւ գրուցում: Գրքի հրատարակությունը չի նշանակում, որ գիրքն ավարտված է, այն մինչ օրս էլ շարունակվում է: Որպեսզի գիրքը չիմացողներն այն պատկերացնեն, ասեմ, որ այնտեղ տարբեր ենթագլուխներ են, որոնք կարող են ունենալ շատ տարբեր ձևաչափեր, օրինակ, դրանցից մեկը նկար է, մյուսը՝ չնկարված ֆիլմ, ինչ-որ ենթագլուխ՝ որոշակի ժամանակաշրջան, ասենք՝ 1988 թ. փետրվարից նոյեմբեր:

Ն. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– Եկ անդրադառնանք քո խմբագրությամբ մեկ այլ՝ ոչ պակաս հայտնի գրքի, հայտնի հատկապես արտասահմանում, թերևս, լեզվի պատճառով, քանի որ այն անգլերեն է: Խոսքը «Armenian Folk Arts, Culture, and Identity» գրքի մասին է:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.– Այդ գիրքը ստեղծվել է 1990-ականների կեսերին, և լույս տեսավ 2001-ին, այսինքն գրվում էր շատ դժվար ժամանակաշրջանում, և բոլոր հեղինակներս էլ չափազանց շնորհակալ էինք Նենսի Սուիզիին, ով կարողացել էր գումար հայթհայթել և ձեռնարկել գրքի ստեղծումը: Ն. Սուիզին բրուտագործ էր, և ԱՄՆ-ում հրատարակել էր բրուտագործության մասին մի գիրք: Նա նաև միջազգային մի կազմակերպության՝ «Country Roads»-ի ղեկավարներից էր, որն աջակցում էր տարբեր ժողովուրդների ժողովրդական արվեստի պահպանմանն ու զարգացմանը: Եվ իր մոտ ծագեց հայկական ժողովրդական արհեստներն ու արվեստները ներկայացնող մի գիրք հրատարակելու գաղափարը: Քանի որ դա իր ոլորտը չէր, նա փորձեց գտնել համապատասխան մասնագետների և այդ առիթով ինձ դիմեցին արդեն իմ գործընկերները, ում ինքը խնդրել էր կազմել գրքի կոնցեպցիան: Գործընկերներս ինձ դիմեցին ոչ միայն այդ կոնցեպցիան կազմելու, այլև գրքի հետ կապված մյուս աշխատանքները ղեկավարելու խնդրանքով: Ըստ էության, ողջ գիրքը մտածել, կառուցել է հայկական թիւր, Ն. Սուիզին ավելի զբաղված էր գրքի տեքստն անգլալեզու ընթերցողին ավելի հասկանալի դարձնելու հարցերով և իր հիմնական ուշադրությունն ու ներդրումը՝ լեզվի խմբագրությունն էր: Գրքի սկզբնական վերնագիրն էր՝ «Եվ վարպետը ստեղծեց աշխարհը», որը, իմ կարծիքով, լավագույնս էր արտացոլում, թե ինչի մասին է գիրքը, քանի որ դրանում իսկապես հայկական մշակույթը դիտվում էր այդ մշակույթը ստեղծող վարպետների աչքերով: Ու ինձ թվում է, հենց դրանով էր այդ գիրքը հետաքրքիր և տարբերվում հայ մշակույթին նվիրված այլ գործերից: Գիրքը գրել են հայաստանցի ինը հեղինակներ՝ Համլետ Պետրոսյանը, Հարություն Մարությանը, Հովհաննես Պիկիցյանը, Աշխունջ Պողոսյանը, Սվետլանա Պողոսյանը, Անուշ Շարամբեյանը, Հրաչյա Մարգարյանը, Ադասի Թադևոսյանը և ես: Գիրքը շարադրվում էր 1990-ականներին, և չնայած Հայաստանի համար այդ տարիների դժվար պայմաններին, շնորհիվ այս նա-

խագծի մենք կարողացանք գնալ գիտարշավների, հավաքել պակասող նյութը, անել անհրաժեշտ լուսանկարներ:

Ն. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– Հայաստան վերադառնալուց հետո քո գիտական հետաքրքրությունների դաշտը, կարծես, մի փոքր փոխվեց. ուսումնասիրության թիրախ դարձավ հայկական նյութը: Ի՞նչ նոր ուղղություններ և գիտական թեմաներ սկսեցին քեզ հուզել այս դաշտում:

Լ. ԱԲԸԱՀԱՄՅԱՆ.– Քանի որ ես Խորհրդային Միության այն քիչ մասնագետներից էի, որոնք զբաղվում էին Օվկիանիայի և Ավստրալիայի ազգագրությամբ, նույնիսկ Հայաստան վերադառնալուց հետո բավականին երկար ժամանակ շարունակում էի մասնակցել այս թեմայով տարբեր գիտաժողովներին և ունեւ հրատարակած տարբեր հոդվածներ, որոնք վերաբերում են այս ուղղությանը նաև իմ Հայաստանում եղած ժամանակաշրջանում: Բայց հետաքրքիրն այն էր, որ այս թեմայի յուրօրինակ զարգացումը եղավ հայկական նյութի վրա: Ես չէի կարող այլևս զբաղվել Ավստրալիայով, քանի որ ոչ միայն դաշտն էր անհնարին, այլև Հայաստանում անհասանելի էր այս թեմային վերաբերող գրականությունը. պարզ է, որ այն ժամանակ համացանց չկար և գրականության խնդիրը ֆիզիկական տեղափոխություններ էր ենթադրում: Արվեստի հանդեպ ունեցածս հետաքրքրությունը բերեց նրան, որ ես սկսեցի նաև զբաղվել արվեստի մարդաբանությամբ: Պետք է շեշտել, որ սա արվեստաբանություն չէ, այլ հենց արվեստի մարդաբանություն, սրանք տարբեր ոլորտներ են: Ունեւ մի շարք հոդվածներ՝ նվիրված, օրինակ, Սերգեյ Փարաջանովի, Ռուդոլֆ Խաչատրյանի և այլոց արվեստին: Այս հոդվածներում ես փորձում եւ նրանց աշխատանքները դիտել մշակութաբանական տեսանկյունից:

Բացի այդ, այն, ինչը կազմում էր իմ առաջին գրքի առանցքը՝ նախնադարյան տոնն ու առասպելաբանությունը, շարունակում է մնալ իմ գիտական կարևոր հետաքրքրություններից մեկը. դա, մասնավորապես, համեմատական առասպելաբանությունն է, որի հարցերով հիմա էլ եւ շարունակում զբաղվել: 1988 թվին, երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը, ես իմ գործընկերներ Ջավեն Խառատյանի, քո [Հարություն Մարությանի] և ուրիշների հետ զբաղվեցինք ժողովրդական ազգային շարժումներով՝ դրանք դիտարկելով ոչ թե քաղաքական, այլ՝ ազգագրական կտրվածքով: Մենք դաշտում էինք և գրանցում էինք այն, ինչ կատարվում էր այդ բուռն տարիներին: 1988-ին անսպասելիորեն ես ինձ հայտնաբերեցի այն նախնադարյան վերականգնած տոնի խորքում և, կարելի է ասել, էքսպերիմենտալ կերպով ժամանակի «տեղափոխություն» ստացվեց, երբ արխիվ տոնը ծավալվեց Երևանի հրապարակում և փողոցներում: Ես փորձեցի Ավստրալիայի բնիկների մշակույթի ուսումնասիրության մեջ կիրառած

սկզբունքներն օգտագործել այսօրվա «քաղաքական տոնը» ուսումնասիրելու ժամանակ:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– Դաշտային այդ աշխատանքի որոշ արդյունքներ հրապարակվեցին առանձին հոդվածներով, որտեղ երբեմն հայտնվում են հղումներ «Ժողովուրդը հրապարակում» չավարտված գրքին: Արդյո՞ք այն դեռ քո օրակարգում է:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.– Շատ ճիշտ դիտողություն է, ես բազմիցս հղում եմ այդ աշխատանքը, որը ինձ միշտ թվում է, որ շուտով կավարտեմ, և որի առանձին գլուխներ արդեն վաղուց հրատարակված են, առնվազն 1990 թվից՝ անմիջապես Ղարաբաղյան շարժումից հետո: Ինձ այնտեղ մի գլուխ է շատ հետաքրքրում, որը դեռ պակասում է՝ «Ապստամբները ապստամբությունից հետո»:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– Արդեն տաս տարուց ավել է, ինչ ղեկավարում ես Արդիականության ազգաբանություն բաժինը, ինչո՞վ է այն զբաղված:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.– Ղարաբաղյան շարժման ուսումնասիրության ժամանակ մենք գրանցում էինք նյութեր մի երևույթի մասին, որը դեռ ընթացքում էր: Այս մոտեցումը դարձավ սկզբունք մեր բաժնի ողջ աշխատանքի համար՝ գրանցել հրնթացս կատարվող երևույթները, որպես ականատես և գործընթացի մասնակից, այլ ոչ թե միայն տարբեր մարդկանց հիշողության վրա հենված տեղեկություններ: 2000 թ., երբ ֆինանսավորումը կատարվում էր գիտական թեմատիկ խմբերով, ես ղեկավարեցի «Ճգնաժամի առօրեականությամբ» զբաղվող խմբի աշխատանքները: Իսկ երբ 2005 թ. վերադարձան նորից բյուջետային ֆինանսավորման, հենց այդ խմբի հիման վրա ստեղծվեց նաև բաժին, որը շարունակեց զբաղվել առօրյայի հետազոտությամբ: Եվ այդ իմաստով է օգտագործվում «արդիականություն» եզրը՝ դա առօրյայի ուսումնասիրությունն է: Բհարկե, անհնարին է ուսումնասիրել ամեն ինչ, ամեն մի մանրուք, բայց այս ուղղության նպատակն էլ այն է, որ գիտենալով, որ դա անհնարին է, միևնույն է պետք է հնարավորինս դրան ձգտել:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ.– Քո գործունեության ոչ պակաս կարևոր մասն է դասավանդումն ու մասնագետների նոր սերունդ պատրաստելը, և ի՞նչ կարծիքի ես այն տարածված մտքի հետ, որ քո շուրջ ձևավորվել է ազգագրական մի ուրույն դպրոց:

Լ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ.– Դպրոցի մասին չեմ կարող ասել, երևի դրա մասին ավելի դյուրին է դատել կողքից, բայց դասավանդում եմ վաղուց, 1989 թ. մինչ օրս: ԵՊՀ հնագիտության և ազգագրության, մշակութաբանության ամբիոններում տարբեր դասընթացներ եմ կարդում, մի քանի տարի դասավանդել եմ նաև աստվածաբանության ամբիոնում: Արտասահմանում, մասնավորապես ԱՄՆ-ի համալսարաններում դասավանդելու ընթացքում [տարբեր տարիներին դասա-

վանդել եւմ Պիտսբուրգի, Կալիֆորնիայի (Բերկլիի և Լոս Անջելեսի), Կոլումբիայի համալսարաններում], փորձեցի դասավանդել հայկական ինքնության մասին մի կուրս: Առաջին անգամ դա Բերկլիում էր, 1997 թ.: Հետո այդ կուրսը կարդացել եմ այլ համալսարաններում: Այդ դասախոսությունների հիման վրա ստեղծվեց մի նոր անգլերեն գիրք՝ «Armenian Identity in a Changing World» («Հայոց ինքնությունը փոփոխվող աշխարհում»), որը հրատարակվեց 2006 թ.: Դա հենց այն գիրքն է, որ նկարագարոված է իմ փիլիսոփայական երգիծանկարներով: Գրքի կառուցվածքը մի փոքր շեղվում է ակադեմիական չոր լեզվից: Մասերն անվանվում են ոչ թե «գլուխներ», այլ «արահետներ» (“paths”), քանի որ հայ ինքնությունը փորձում եմ կառուցել՝ օրինակ վերցնելով պուրակ կազմակերպելու երեք մոտեցումները: Մեկը դոգմատիկ ձևն է, երբ ծառեր են կտրում, ցանկապատներ դնում, ինչ-որ տեղեր գրում, որ խոտը չտրորեն, ու ասում՝ սա պուրակ է: Կա նաև գիտական կամ «գերմանական» ձև, երբ մինչև պուրակ կազմակերպելը, մանրամասն ուսումնասիրում են, թե ինչ է պուրակը, ինչ այգիներ կան, ինչ է ագրոնոմիան, ինչ ծառեր են հարկավոր, մի խոսքով, հենվելով քո գիտական ողջ պաշարի վրա ես ձևավորում պուրակը: Եվ կա երրորդ՝ «անգլիական» ձևը. երբ մի անխնամ տարածքում, որտեղ և ծառեր կան և խոտ, թողնում են, որ մարդիկ ինչ-որ ժամանակ այնտեղով անցնեն, և արդյունքում մարդիկ ինչ-որ արահետներ են ստեղծում, որոնք, պարզվում է, ամենաօպտիմալ ճանապարհներն են, որ հնարավոր էր այդտեղ անցկացնել: Հենց սրանց հիման վրա պուրակը կառուցողներն այդ տրորած տեղերը բարեկարգում են՝ կանոնավոր տեսք տալով այդ արահետներին: Երեք մոտեցումն էլ միաժամանակ գործում են, բայց ամեն մի հասարակությունում այս երեքից որևէ մեկն ավելի է արտահայտված: Ես փորձել եմ մեր «ինքնության պուրակը» նայել ավելի անգլիական ձևով, ի-հարկե, հաշվի առնելով նաև այն երկու ձևերը, և դրա համար էլ իմ գրքում գլուխները կոչվում են արահետներ: Այսինքն, ոչ թե հայտարարվում է, որ հենց սա է հայ ինքնությունը, այլ փորձում ենք տեսնել, թե այդ արահետները ինչպես ենք կառուցում և այդ գործը շարունակում մինչ օրս:

Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ. – Շատ շնորհակալ եմ հետաքրքիր գրույցի համար: